

ԱՇ ՌԻՆ-Չ ՄԵՌ 2015



Մարդասիրական օգնության տրամադրում որք հայ երեխաներին ամբողջ աշխարհում սկսած 2005 թ. -ից

Որք հայ երեխաների օգնության միություն

2015 թ-ի մասնաճյուղերի ուշագրավ իրադարձությունները

2015թ. Հունվար: Կոլորադոյի SOAR մասնաճյուղը հունվարին կազմակերպված ամենամյա արվեստի ցուցահանդեսի ընթացքում հավաքեց 4700 ԱՄՆ դոլլար օգնելու "Ջերմուկ անկյան" 2015 թվականի արվեստի ծրագրերին: "Ջերմուկ անկյուն" -ը խմբային տուն է Հայաստանում, որը հիմնադրվել է 2006 թվականին օգնելու հաշմանդամ ծնողագուրկ երիտասարդներին: Հունվարի արվեստի ցուցահանդեսը, սկսած առաջին միջոցառումից, 6 տարվա ընթացքում, հավաքել է ընդհանուր 21 144 ԱՄՆ դոլլար: Այս տարի, ցուցահանդեսը ներկայացրեց "Ջերմուկ Անկյան" անդամների, Կոլորադոյի և ամերիկյան գեղանկարիչների արվեստի գործեր: Անհատներ, տեղական գործարարներ և կազմակերպություններ նվիրաբերեցին խաղարկային իրեր:

2015թ. Հունիս: Ավելի քան 100 մարդ մասնակցեց Չիկագոյի SOAR-ի ամենամյա հանգանակությանը: Այս տարի միջոցառումը ներկայացրեց հայկական ազգային երգեր Նյու Ջերսի Ջուլյա տրիո երգչախմբի կատարմամբ: Այն անցկացվեց Չիկագոյի Սբ. Գրիգոր հայկական լուսավորչական եկեղեցում: Հյուրերը հաճելի ժամանակ անցկացրեցին աճուրդային մրցույթում և իրենց բախտը փորձեցին Միքայել Արամի սկուտեղի համար կազմակերպված խաղարկությանը: Ավելի քան 6000 ԱՄՆ դոլլար հավաքվեց ի օգնություն Հայաստանի նորաբաց ատամնաբուժարաններին:

2015թ. Հուլիս: Դալլասի SOAR-ի մասնաճյուղը իր առաջին դպրոցական պարագաների հանգանակությունը կազմակերպեց համընդհանուր ճանաչում ունեցող ջութակահար Ռադու Կերնաստի հիանալի երաժշտական ներկայացման ուղեկցությամբ: Նա ներկայացրեց իր լավագույն աշխատանքներից մի քանիսը և նույնիսկ աջակցություն ստացավ ի դեմս մի քանի պարողների: Նվիրաբերված իրերը կուտարկվեն Երևանի Մարի Բզմիրյանի անվան մանկատուն և Գյումրու Թռչունյան տուն՝ մանկատուն:

2015թ. Օգոստոս: Լոս Անջելոսի SOAR մասնաճյուղը Հոլիվուդի Թագյան մշակութային համալիրում անցկացրեց իր հինգերորդ ամառային տոնական "Կազինո Ռոյալ" միջոցառումը: Ավելի քան 300 մարդ էր եկել մասնակցելու "007" հրաշքների գիշերվան: Միջոցառման հովանավորների հետ միասին, ինչպիսիք են Կատ Մինասը, IceLink Էլիտար ժամացույցների և ոսկերչական իրերի, Tic Tock Florals ընկերությունը և բարձր նորաձևության դիզայներ Մայքլ Կոստելյոնը: Լոս Անջելոսի SOAR-ը հավաքեց ավելի քան 63000 ԱՄՆ դոլլար և՛ նվիրաբերությունների և երեխաների հովանավորչական հանգանակության արդյունքում:



SOAR Երեխաների Հովանավորություն Հաջողված պատմություն

Երեխաների հովանավորչության ծրագիրը SOAR-ի որք հայերին աջակցման հիմնական մեխանիզմն է: SOAR-Ժնևի նախագահ Քրիստինա Նեթլը պատմում է, թե ինչ ազդեցություն ունեցավ իր կյանքի վրա Վանաձորի մանկատան մի որբի՝ Դավիթին աջակցելը:



«Ես Հայաստանում որբերին աջակցման ծրագիր էի փնտրում և բարեբախտաբար դեմ առա SOAR-ի կայքին: Արագ ստացա անհրաժեշտ տեղեկատվությունը ինձ հետաքրքրող յուրաքանչյուր երեխայի մասին: Ընտրեցի Դավիթին, այդ ժամանակ նա դեռ 9 տարեկան էր և ողնաշարի բուժման վճարման հետ կապված աջակցության կարիք ուներ: Հետևողական հետվիրահատման բուժման անհրաժեշտություն կար: 2 տարի անց ես այցելեցի Վանաձորի մանկատուն և հանդիպեցի Դավիթին: Նա բարեկրթության կանոններով օժտված տղա էր, բացեց մեքենայի դուռը ինձ համար և օգնեց տանելու իմ ծանր պայուսակը: Մենք մի փոքր գրուցեցինք: Նա ևս մեկ անգամ շնորհակալություն հայտնեց ինձ իր հեծանիվի համար, որը մենք գնել էինք նրա 10-րդ ծննդյան տարեդարձի կապակցությամբ: Նա ասաց, որ մանկատանը շատ տղաներ կան, իսկ հեծանիվը մեկն է, ուստի նրանք հերթով են հեծանիվ ըջում: Շատ հաճելի էր իմանալ, որ նա կիսում է իր հեծանիվը այլ տղաների հետ, և հենց այնտեղ որոշեցի, որ մենք գումար կհավաքենք ևս 10 հեծանիվ գնելու համար: Այդ տարվա Սուրբ ծննդյան տոներին, SOAR-Ժնև-ի օգնությամբ, մենք կարողացանք 10 հեծանիվ գնել մանկատան համար:

1915թ. Հայոց ցեղասպանության զոհերին ի հիշատակ



SOAR-ի մասնաճյուղերը ամբողջ աշխարհով մեկ, այս տարվա ապրիլին, հիշեցին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը, որի ընթացքում 1,5 միլիոն հայ է զոհվել և 150 000 հայ երեխա է որբացել:

SOAR-ը շնորհակալություն է հայտնում այդ երեխաներին իրենց քաջության համար և հիշում է նրանց զրկանքները: SOAR-ի մասնաճյուղերը նշեցին Հայոց Ցեղասպանության տարեկիցը տարբեր դրամահավաքությունների, համերգների և այլ Ցեղասպանության հիշատակին նվիրված միջոցառումների միջոցով:

Շրագրային նշանակալից միջոցառումներ

SOAR -ը առաջարկում է բարեգործական ծրագրերի մի մեծածավալ շարք՝ ուղղված բարելավելու Հայաստանի որբ երեխաների կյանքը: Ներկայացնում ենք այդ ծրագրերից միայն երկուսը:

Որբերի անցումային ծրագիրը ստեղծվել է 2015թ. մարտին խթանելու Հայաստանի որբ և այլ օրինական կարգավիճակ ունեցող երեխաների ինքնուրույն ապրելակերպը:

Ծրագիրը ունի չորս հիմնական բաղադրիչներ.

1. Խորացված կրթություն կամ մասնագիտական դասընթացներ

2. Բնակարանային և ամենօրյա կենցաղային ծախսերի Ֆինանսական օգնություն ինքնուրույն կյանքի խթանման համար

3. Հոգեբանական խորհրդատվություն

4. Աշխատանքային պրակտիկա և աշխատանքի տեղավորում՝ այդ թվում հարցազրույցներին մասնակցելու ուսուցում

Բիզնեսի զարգացման ծրագիր: Բիզնեսի զարգացման ծրագիրը հիմնադրվել է 2015թ. մայիսին օգնելու Հայաստանի որբերին խթանելու իրենց սեփական բիզնես նախաձեռնությունները: ԲԶՕ-ին մասնակցող կամավորները նպաստում են Հայաստանի մանկատների միջև և նրանց համար ծագող բիզնես գաղափարների զարգացմանը, վերանայում են բիզնես պլաններ, աջակցում են մարքեթինգային ծրագրերի ձևավորմանը, ինչպես նաև առաջարկում են բիզնեսի իրականացման ռազմավարություն: ԲԶՕ-ն վերահսկվում է Ամմանի, Բուդապեշտի, Քիվլենդի, Ստոքհոլմի և Հարավարևելյան Ասիայի SOAR մասնաճյուղերի կողմից:

Հարցազրույց SOAR-ի 2014 թվականի լավագույն կամավորականի հետ

Գոհար Մարտիրոսյան Պելտեր

Գոհարը ներգրավված է SOAR-ում սկսած կազմակերպության առաջին իսկ օրերից: Նա այժմ ունի երեք դեր կազմակերպությունում՝ Արևմտյան ԱՄՆ-ի և Հարավային Ամերիկայի շրջանային տնօրեն, դրամաշնորհների և կոորդիատորական ֆինանսավորման տնօրեն և Վենտուրա շրջանի մասնաճյուղի նախագահ:

Հ: Պատմեք մի փոքր Ձեր մասին, ինչպես եք դուք ներգրավվել SOAR:

Պ: Ես ծնվել եմ Հայկաբում, սակայն մեծացել և բարձրագույն կրթություն եմ ստացել մեծ մասամբ Բեյրութում, Լիբանան:

Փախչելով Լիբանանի քաղաքացիական պատերազմի ավերամեծերից՝ ես գաղթեցի Կալիֆորնիա, որտեղ ես վերսկսեցի իմ կարիերան Լոս Անջելեսի կալիֆորնյան համալսարանում (UCLA), որպես վարչական բուժքույր և միաժամանակ ստացա բուժքույրի մագիստրոսի աստիճան: Ունեցել եմ բազմաթիվ պաշտոններ, ինչպիսիք են ադմինիստրատոր, մանկավարժ, բուժքույր-մասնագետ Կայգեր հիվանդանոցում, և խորհրդատու ԱՄԳԵՆ-ում, ինչպես նաև պաշտոններ Հանթինգտոնի հուշահամալիրի հիվանդանոցում և Լոս Անջելեսի կալիֆորնյան համալսարանում:



Իմ ծնողների կորստից հետո, ես, հարգելով նրանց հիշատակը, որոշեցի իմ հետագա ջանքերը ուղղել հայերի կարիքներին ծառայելուն: Հիշելով իմ հոր և մայրական տատ ու պապի փորձությունները, ովքեր վերապրել են Հայոց ցեղասպանությունն ու որբացել, ես ինձ համար առաջնահերթ համարեցի որբերին օգնությունը: 2007 թվականին ես միացա SOAR-ին և օգնեցի հաստատելու առաջին SOAR-ի մասնաճյուղը Լոս Անջելեսում:

Այնուամենայնիվ, իրական դրդապատճառը ինձ համար հանդիսացավ ուղևորությունը դեպի Հայաստան, Արցախ, Ջավախք և պատմական Արևմտյան Հայաստան, իմ ամուսնու՝ Միշի և դստեր՝ Մեգանի հետ: Այցելելով մի քանի մանկատներ՝ ես անձամբ տեսա անմխիթար կենցաղային պայմանները, որն էլ ամրապնդեց իմ վճռականությունը և պարտավորությունը բարձրացնել մեր հասարակության իրազեկությունը որբ երեխաներին մարդասիրական օգնություն ցույց տալու անհրաժեշտության հարցում՝ Հայաստանում, Սիրիայում, Լիբանանում և այլուր:

Հ: Ի՞նչ կցանկանաիք, որ մարդիկ իմանան SOAR-ի մասին:

Պ: SOAR-ը շատ յուրահատուկ բարեգործական կազմակերպություն է, կարևոր հեռանկարներով և հանձնառությամբ: Այն հիմնված է գուտ մեկ առաքելության վրա, ինչն է՝ օգնել հայ որբերին ամբողջ աշխարհում: Այն շատ թափանցիկ է և հրապարակայնորեն բաց: Դա նաև ժամանակակից կազմակերպություն է, որը կարելի է համարել վերաբերում է հայ երիտասարդ սերնդին՝ պահելով սերտ կապերը հայկական ժառանգության և ավանդույթների հետ: Այն հաջողությամբ կարողացել է համախմբել ամբողջ աշխարհով մեկ սփռված հայերին, անկախ տարիքից, սեռից, մշակույթից, կամ որևէ այլ պատկանելությունից:

Հ: Ռեքոն է եղել Ձեր ամենամեծ մարտահրավերը որպես SOAR-ի կամավոր:

Պ: Մարտահրավերները այնքան շատ են, իսկ ումանք էլ շատ դժվար հաղթահարելի: Դա ամենօրյա պայքար է՝ պահել առաքելությունը կենդանի: Ամենամեծ խնդիրն այն է, թե ինչպես փոխել որբ երեխաների կյանքի իրականությունը, ինչպես կարելի է բարձրացնել մարդկանց իրազեկվածությունը որբ կամ լքված երեխաների խնդիրների և տառապանքների վերաբերյալ:

Հ: Պատմեք ձեր որևէ հաջողության մասին որպես SOAR-ի կամավոր.

Պ: Ես հպարտ եմ SOAR-ին 9 տարվա անդամակցության ընթացքում իմ կատարած ողջ աշխատանքով: Իրականացնելով իմ ծնողների ժառանգությունը՝ կրթելու երեխաներին և հասկանալով Հայաստանի մանկատների կարիքները, մենք ձեռնամուխ եղանք, 2011 թ-ին, համակարգչային լաբորատորիայի նախագծին՝ հնարավորություն տալով որբ երեխաներին ստանալու ժամանակակից ուսուցում և բարձրագույն կրթություն: Նախագիծը իմ և իմ թիմի համար ողջ երկու տարի տևեց, որոնց ընթացքում անցկացվեցին տարեկան երեք - չորս դրամահավաքման միջոցառումներ, և հաջողությամբ կառուցվեցին 12 համակարգչային լսարաններ Հայաստանի 12 մանկատներում և կենտրոններում: Այս բոլոր ձեռքբերումները հնարավոր չէին լինի իրականացնել առանց ընկերների և հավատարիմ աջակիցների օգնության:

Հ: Ի՞նչ կցանկանաիք ավելացնել SOAR-ում ձեր աշխատանքի մասին:

Պ: Իմ աշխատանքը SOAR-ում շարունակում է մարմնավորել իմ վաղեմի նվիրվածությունը որբերին: Այն անցել է բազմաթիվ մարտահրավերներով և հիասթափություններով, ինչպես նաև կիսել է բազմաթիվ հաջողություններ և խիճ, պայքարել բազում դժվարությունների դեմ և այդ ճանապարհին, նույնիսկ եթե ես կարողացել եմ բարեփոխել մեկ կյանք, ապա իմ աշխատանքը հաջողված եմ համարել:

Երեխաների իրավունքների վերաբերյալ կարևոր տեղեկատվություն: Հաշմանդամությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում

Չնայած նրան, որ Հայաստանը 2006 թ.- ին վավերացրել է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի Կոնվենցիան, հաշմանդամությամբ ապրող մեծահասակների և երեխաների ապահովումը շարունակում է լուրջ մարտահրավեր մնալ: Հայաստանում, հաշմանդամ մեծահասակների ավելի քան 90% -ը գործազուրկ է: Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի, հաշմանդամություն ունեցող երեխաների 65% -ը աղքատ է կամ ապրում է օրական միջին հաշվով \$3-ով, իսկ հաշմանդամ երեխաների 30% -ը ոչ մի տեսակի դպրոց չի հաճախում: Ղարաբաղում իրավիճակը այնքան էլ չի տարբերվում. շուրջ 10.000 հաշվառված հաշմանդամ, այդ թվում նաև երեխաներ, բժշկական և սոցիալական կարիքների բավարարման պակաս: Շատ հայ հաշմանդամ երեխաներ սոցիալական որբեր են և ապրում են մանկատներում, քանի որ ծնողները չեն կարողանում խնամել իրենց:

Ատամնաբուժական օգնություն հայ որբ երեխաներին

Հայ երեխաների միայն 20%-ն է մինչև 18 տարեկան հասակը պահպանում իրենց բոլոր բնական ատամները;

SOAR-ը համագործակցում է Գլոբալ Գիվինգի հետ՝ օգնելու հայ որբերին ստանալու ատամնաբուժական ծառայություն: Մենք Ձեր օգնության կարիքն ունենք կառուցելու ատամնաբուժական կենտրոններ չորս մանկատներում՝ ՕԼԱ կենտրոն, Ֆրիտյոֆ Նանսենի մանկատուն, Թռչունյան տուն և ՕԼԱ Տաշիր, ինչը հնարավորություն կտա մատուցելու ատամնաբուժական ծառայություն 235 ծնողազուրկ երեխաներին: Լրացուցիչ տեղեկությունների համար, խնդրում ենք դիմել Ջորջ Յակոբյանին: gyacoubian@soar-us.org կամ ԳՈՀԱՐ Պելտերին kpelter@soar-us.org:

Հետաքրքիր է իմանալ

Հայաստանը աշխարհում գինի արտադրող երկրներից ամենահիններից մեկն է: Այդ հաջողությունը գինու արտադրության գործում կարելի է վերագրել իր օրինյալ դիրքին՝ Արարատ լեռան բերրի հովիտներում, որտեղ բարձր որակի խաղող է աճում:



SOAR c/o George S. Yacoubian, Jr.
1060 First Avenue, Suite 400
King of Prussia PA 19406
610.213.3452 – Office
610.229.5168 - Fax
gyacoubian@soar-us.org